ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

01-ը հունիսի 2024թ.

Շնորհավորական ուղերձ Հունիսի 1-ի՝
Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվա առթիվ

Համաշխարհային տոնացույցում նշվող Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրը՝ հունիսի 1-ը, ամրագրված, սպասված ու սիրված տոն է նաև մեր երկրում:

Հայ ընտանիքներում երեխաները առանձնահատուկ տեղ ունեն և մշտապես շրջապատված են մեծերի անսահման սիրով ու հոգատարությամբ: Մեր կողքին ապրում են նաև ծնողական խնամքից զուրկ և առանձնահատուկ կարիքներով երեխաներ, որոնց խնամքի, կրթության, հանգստի, առողջության պահպանման և այլ իրավունքների իրացումն ապահովելու համար, Աբովյանի համայնքապետարանի, պատկան կառույցների և բարեգործական ՀԿ-ների համագործակցությամբ անընդմեջ տարվում են զգալի աշխատանքներ:

Աբովյան համայնքի սիրելի՛ երեխաներ.

Դուք միշտ մեր ուշադրության կենտրոնում եք: Մեր աշխատանքում առաջնային է ձեզ համար բարեկարգ ու հարմարավետ պայմանների ստեղծումը, իսկ այս պայծառ օրով, հատկապես, ձեզ հետ մանկանում ենք և անում առավելագույնը, որպեսզի ժպիտներ, ուրախ ու անմոռանալի ակնթարթներ պարգևենք ձեզ:

Ջերմորեն շնորհավորում եմ բոլորիդ տարվա ամենալուսավոր տոնի առիթով, ուզում եմ միշտ լինեք սիրված, պաշտպանված, առողջ ու երջանիկ. վայելեք ուրախ ու զվարթ մանկություն, մեծանաք անվտանգ և ուժեղ հայրենիքում:

Սիրելի՛ ծնողներ.

Այս պայծառ տոնի առիթով առանձնահատուկ շնորհավորում եմ նաև ձեզ.

Անկախ գոյություն ունեցող խնդիրներից՝ յուրաքանչյուրդ ձգտում եք երեխաների համար ապահովել անհոգ ու լիարժեք մանկություն, իսկ նրանց նվիրված օրը վերածում մեծ ու հիշարժան տոնի:

Հունիսմեկյան տոնի առթիվ կրկին շնորհավորելով՝ մաղթում հայ մանուկներին անհոգ մանկություն, անամպ երկինք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ